

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԵՎ ՆԵՐԴՐՅԱԼ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՄԲՈՆՈՒՄԸ
ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՎԵՏԻՔ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Միջանկյալ և ներդրյալ արտահայտություններ գործածվել են հայոց լեզվի զարգացման բոլոր փուլերում, սակայն սկզբնապես քերականական արժեքավորում չեն ստացել. հալ քերականագիտության ձևավորման շրջանում դրանք, բնականաբար, չէին կարող արժանանալ որոշակի ուշադրության, մանավանդ՝ նախադասության մասին ուսմունքի բացակայության պայմաններում:

Հայտնի է, որ նախապես թե՛ ձայնարկությունները (սրանք մեր անցյալի քերականների աշխատություններում անվանվել են միջարկություններ), թե՛ եղանակավորող բառերը համարվել են մակբայներ: Այս մոտեցումը գալիս է Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստից» և երկար դարեր իշխող է եղել: Թրակացին մակբայի տեսակների մեջ մտցնում է նաև՝ «Եւ ըղծից նշանականք (ն) են իբրու թե իցիւ, աւշ, գոյշ մարտան: Եւ խորխտականն, իշտ: Եւ սպառնականն, տիր, տի: Եւ հեշտականն, վաշ, յայ: ...Եւ աւաղականն, ոհ, ախ, ուխ, իշ, վահ: Եւ եղկականն, վայ, աւաղ, աղէտ, եղուկ: ...Եւ հեզնականն, ուհ, յհ: ...Եւ դգուշականն, զգոյշ, գուցէ: ...Եւ դիպուածոյն, թերեւ, ինձ թուի, ի դեպ: ...Եւ բաղդատականն, առաւել, նուազ»¹: Մ դարում թարգմանվում է «Քերականական արվեստը»՝ «հաւմաւեցվելով հալեւեհին»²: Եթե հարմարեցվել է հայերենին, ապա պարզ է, որ Թրակացու հալ մեկնիչներն իրենք էլ նկատել են զգացմունք արտահայտող, զգացական երանգ ունեցող բառերի գոյությունը խոսքում, սակայն նախադասության մասին ուսմունքի բացակայության պատճառով դրանք շարահյուսական արժեքավորում չեն ստացել:

Ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Աբրահամյանը, «Գրաբարում կան բառեր, որոնք որպես խոսքի մաս որոշ չափով մոտ են մակբայներին, սակայն չեն նույնանում վերջիններիս հետ: Մակբայներից, անշուշտ, պետք է տարբերել այդպիսի բառերը, որոնք եղանակավորում են նախադասությունը կամ նախադասության անդամները՝ նրանց հաղորդելով հաստատական, ժխտական, հարցական, երկբայական բնույթ, այլև ուժգնացնում, երանգավորում են զըրսևորվող իմաստը»³: Ա. Աբրահամյանն առաջին անգամ գրաբարյան մակբայներից անջատում է եղանակավորող բառերը և դիտում իբրև առանձին խոսքի մաս⁴: Այսպիսով, ակնհայտ է, որ գրաբարյան եղանակավորող բառերն իրենց իմաստային բաղմագանությունամբ չէին կարող շունենալ միջանկյալ կիրառություններ: Եվ իրոք, ոչ միայն առանձին բառեր, այլև ամբողջական նախադասություններ միջանկյալ⁵ կիրառությամբ գործածվել են դեռևս մեսրոպյան շրջանի գրաբարում: Այլ կերպ ասած, թեև չի եղել այդ արտահայտությունների

¹ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, с. 32—34.

² Մանրամասն տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, 1960, էջ 128:

³ Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևնարկ, Երևան, 1973, էջ 276:

⁴ Նույն տեղում, էջ 270:

⁵ «Միջանկյալ» տերմինի տակ հասկանում ենք նաև ներդրյալ արտահայտությունները, քանի որ դրանք նույնպես գիտվել են իբրև միջանկյալ և միայն վերջերս են առանձնացվել որպես շարահյուսական ինքնուրույն կարգ:

շարահյուսական ըմբռնումը, սակայն դրանք կարևորություն են ունեցել որպես խոսքի լիարժեք արտահայտման միջոցներ, հետևաբար, պետք է ուշադրություն դարձնել դրանց միայն իմաստային կողմի վրա: Ինչպես. «Իսկ ի լնուլ ամացն, որ եղև Գրիգորիոս ի վիրապին, իբրև ամս երեքտասան, և էր մարտ սաստիկ խստութեան Տրդատայ ընդ Պարսից թագաւորին՝ զամենայն աւուրս կենաց իւրոց»⁶: Կամ՝ «Եւ ընդ այս մի ոք զարմասցի, եթէ բաղում աղգաց լեալ մատենագիրք, որպէս ամենեցուն է յայտնի, մանաւանդ Պարսից և քաղղէացոց...»⁷: Անհասկանալի է դառնում այն պնդումը, «որ գրավոր խոսքի մեջ միջանկյալ նախադասությունների կիրառության հարցում առաջնությունը պատկանում է Ոսկան Երևանցուն: Նա իր տպագրած «Աստվածաշունչ»-ի մեջ բաղմաթիվ միջանկյալ նախադասություններ է գործածել. սակայն բերականության գրքում այդ մասին ոչ մի խոսք չի ասել»⁸: Ոսկան Երևանցունց դեռևս տասներկու դար առաջ մեր պատմիչները գործածել են այդպիսի նախադասություններ (տե՛ս վերևի օրինակները): Ոչ միայն Ագաթանգեղոսի ու Խորենացու, այլև Եղիշիկ Կողբացու, Ղազար Փարպեցու և այլոց երկերում բաղմաթիվ են միջանկյալ նախադասությունների կիրառությունները: Ինչ վերաբերում է միջանկյալ արտահայտությունների շարահյուսական արժեքավորմանը, ապա դա կապվում է քերականագիտության զարգացման ավելի ուշ շրջանի հետ: Լեզվի զարգացմանը զուգընթաց ավելի որոշակի տեսք է ստանում քերականությունը: Արդեն XVII դ. սկզբներին, ինչպես վկայում է Բաղդասար Դպիրը, ձայնարկությունը սկսում են անշատել մակբայից՝ որպես առանձին խոսքի մաս. «Աստ 'ի վերջնում մասանց բանի՝ նաև այս դիտելի է, զի զոչ և այլ մասն բանի, զոր բանիբուն վարդապետն Սիմէօն Զուղայեցի՝ ախտական կոչէ և ընդ մակբայն դասակցէ. իսկ այլք՝ միջարկուի անանհն և այլ մասն ասեն բանի: ...Իսկ կոչեցաւ Միջարկութի, զի արկանի ի մէջ բանից իբր ըստ ինքեան միայնակ, ոչ ընդ ումեք կապակցեալ...»⁹: Սա նշանակում է, որ ժամանակի լեզվամտածողությամբ արդեն խոսքում ըմբռնվում է այնպիսի բառերի գոյությունը, որոնք մտնում են նախադասության կազմի մեջ, բայց չեն կապվում նրա հետ: Այս մոտեցումը հետագայում հանգեցնում է նաև միջանկյալ արտահայտությունների շարահյուսական արժեքավորմանը: Հետաքրքրական է, որ հենց այս շրջանում է փակագծեր մտել հայերենի կետագրության մեջ: Սրա պատճառներից մեկն, անշուշտ, այն է, որ հայերեն գրավոր լեզվի զարգացման տվյալ մակարդակն արդեն փակագծի՝ կետագրական այդ յուրահատուկ նշանի, գործածության պահանջն է ունեցել: Իսկ դա էլ նշանակում է, որ թեև միջանկյալ արտահայտությունները դեռևս չեն ունեցել շարահյուսական որոշակի բնութագիր, սակայն արդեն ընկալվել է դրանց՝ հիմնական խոսքի մեջ ընկած յուրահատուկ, օժանդակ արտահայտություն լինելը: Գ. Ավետիքյանը գրում է. «Փակագիծ, որ ըստ ոմանց՝ եղեգնաձև, մտեալի լատինացոց կիսաբոլոր գծիւքս II, յոյն բառիւ ասացեալ է փառնթէսիս, այ միջադրութի: Հնարեցաւ 'ի դատանել զհատած ինչ բանի՝ որ և մէջ պարբերութեան անկեալ. 99 *Գուցէ յորժամ գայցեն և մեզ մակեղովնացիքն, և գտանիցեն զձեզ անպատրաստս, ամաչեսցուք մեք, (զի մի ասասցուք թէ դուք)՝ ի մասինդ յայդմիկ պարծանաց (բ. կոր. թ. 4.)»¹⁰: Ավետիքյանն առաջին հայ քերականն է, որ ուշադրություն է դարձրել ներդրյալ սյն արտահայտությունների վրա (Իհարկե, ոչ ժամանակակից ըմբռնմամբ—Ա. Մ.), որոնք ցույց են տալիս, որ խոսքի մեջ տեղ գտած տվյալ արտահայտությունը, լրա-

6 «Ագաթանգեղայ պատմութիւն հայոց», Երևան, 1983, էջ 82:

7 «Մովսիսի Խորենացու պատմութիւն հայոց», Տփղիս, 1913, էջ 5:

8 Հակոբ Մ. Մխիթարյան, Մխիթար Սեբաստացու շարահյուսական ըմբռնմաները, Վենետիկ—Ս. Ղազար. 1969, էջ 58:

9 Բաղդասար Դպիր, Պարզաբանութիւն քերականութեան կարճառօտ և դիւրիմաց, Եր. Պոլիս, 1736, էջ 300—301:

10 Գարրիէլ Աւետիքեան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 575:

դուսը հեղինակինն է, թարգմանչինը և այլն, նաև տվյալ գրքի հրատարակության օմանակը, տեղը, մեջբերման էջը, պարունակում են զանազան ծանոթություններ. սևեռ նախնի գրիչըս շիք այսմ'նշմարանք. և այժմ նաև առ եւրոպացիս ոչ յաճախ վարի 'ի կարգի բանին. բայց միայն ուր զանուն գրող ինչ, հեղինակի, կամ դիմի, կամ զայլ ինչ ուրիշ 'ի բանիցն նշանակեն. ոպ և յընթացս քերականութեա տեսանեսա՝:

Քերականների համար գնալով ավելի ակնառու է դառնում այն հանգամանքը, որ միջանկյալ արտահայտությունները յուրահատուկ իմաստային կապի մէջ են գտնվում հիմնական նախադասության հետ և երկրորդաբար միայն պարզում են նրա միտքը: Միքայել Չամչյանը նկատում է, որ սա (փակագիծը— Ա. Մ.) 'ի մէջ բանի զմասնաւոր բան ինչ և կմ բառ պարագրէ—մինչև առանց ընթեռնույ դայն՝ ամբողջ մնալ իմաց, ուածոյ միւս բանին, յորոյ միջի ղետեղեալ կայ լս՝ »¹²: Իսկ միջանկյալ արտահայտությունների կետադրությամբ վերադարձնելով միշտ իշխող է եղել այն տեսակետը, ըստ որի միջանկյալ նախադասությունները հիմնական խոսքից պետք է անջատել փակագծերով, իսկ բառերն ու բառակապակցությունները՝ ստորակետերով:

Ամփոփելով ասենք, որ միջանկյալ արտահայտությունները մեծ կիրառություն են ունեցել գրաբարում, նկատվել են մեր դեռևս վաղ անցյալի քերականների կողմից, սակայն մինչև XIX դ. կեսերը շարահյուսական որոշակի արժեքավորում չեն ստացել:

Միջանկյալ բառերի, բառակապակցությունների ու նախադասությունների, որպես հիմնական խոսքի հետ քերականորեն չկապվող յուրահատուկ արտահայտությունների, ըմբռնումն ու շարահյուսական արժեքավորումը կապվում է աշխարհաբար լեզվի զարգացման հետ: Աշխարհաբարը զարգացել է գրաբարի հիմքի վրա, հետևաբար, գրաբարյան քերականագիտական մտքի բոլոր նվաճումները ի սպաս են դրվել աշխարհաբարի քերականության զարգացմանը: Շարահյուսական մակարդակում ավելի ամբողջական տեսք է ստացել նախադասության կառուցվածքային բնութագիրը, ուրեմն և, որպես շարահյուսական ինքնուրույն միավորներ, առանձնացել են նաև նախադասության հետ քերականորեն չկապվող արտահայտությունները, որոնց թվում և միջանկյալ բառերը, բառակապակցությունները, նախադասությունները:

Ա. Այտընյանը ընդհանուր գծերով տվել է միջանկյալ արտահայտությունների իմաստային բնութագիրը. «Միջանկյալ կ'սուի այն իմաստը, որ գլխավոր նախադասութիւնը լրացնելու կամ բացայայտելու համար խոսքի մէջը կ'իյնայ»¹³: Սա միջանկյալ արտահայտությունների սահմանման առաջին փորձն է հայերէնում: Նկատի ունենալով միջանկյալ նախադասությունների բացառապես հնչերանգային առանձնահատկությունները՝ Այտընյանը դրանք դնում է հաստատական, հարցական և այլ կարգի նախադասությունների կողքին¹⁴: Այտընյանն առաջին հայ քերականն է, որ նկատել է բազմաստիճան միջանկյալ կառույցների գոյությունը խոսքում և դրանց կետադրության հարցում հանդես է բերել հետաքրքրական մոտեցում. «Կրկին-փակագիծ կը գործածուի՝ երբ հասարակ փակագծի մէջ ուրիշ միջանկեալ մաս մը հանդիպի. ինչպէս. Ալ ուրիշ կողմանէ յոյս շունենալով. (որովհետեւ նոյն իսկ մայրաքաղաքն ալ [Հոռվմ] յայտնի վտանգի մէջ էր տեսնէին), որոշեցին որ Հռաւեննայի բերդն ամրացնեն եւ հոն ապաւինին»¹⁵:

Հետագայի հայ քերականները (մինչև XX դ.) հիմնականում կրկնել են Այտընյանին և միջանկյալ արտահայտությունների բնութագրման հարցում ավել-

¹¹ Նույն տեղում, էջ 575:

¹² Մ. Չ. Գ ա մ շ ե ա ն, Քերականութիւն հայկազեան լեզուի, Շուշի, 1859, էջ 596:

¹³ Ա. Այտընյան, Քերականութիւն աշխարհաբար կամ արգի հայերէն լեզուի, հանդերձ ներածութեամբ եւ յաւելումով, Վիէննա, 1866, էջ 140:

¹⁴ Նույն տեղում, էջ 139:

¹⁵ Նույն տեղում, էջ 356:

լի հեռու չեն գնացել: Ա. Արաբաջյանը ավելի որոշակի տեսք է տվել միջանկյալ նախադասությունների սահմանմանը. «Այն նախադասությունը, որ ընկած է մի ուրիշ նախադասության մէջ ե նրա ոչ մի անդամից կախում չունի, կոչվում է միջանկյալ»¹⁶: Այստեղ արդեն միջանկյալը որոշակիորեն դիտված է որպես ինքնուրույն նախադասություն, որը քերականորեն չի կապվում այն նախադասության հետ, որի կազմում հանդես է գալիս: Միջանկյալ նախադասությունը սահմանելիս Արաբաջյանը հենվել է ոչ միայն իմաստային կողմի վրա, այլև հաշվի է առել դրա՝ հիմնական նախադասության հետ քերականորեն կապված չլինելը: Ստ. Պալասանյանն ավելի հանգամանորեն է կանգ առել միջանկյալ նախադասությունների իմաստային բնութագրման վրա: Նա նույնպես գտնում է, որ միջանկյալ նախադասությունները շարահյուսական ինքնուրույնություն ունեն և ընդունում է Արաբաջյանի սահմանումը: Ինչ վերաբերում է միջանկյալ նախադասությունների կետադրությանը, Պալասանյանը գրում է. «Միջանկյալ նախադասությունը գլխավորից բաժանվում է երկու ստորակետով, ուրեմն նաև երկու գծով կամ փակագծով»¹⁷:

Միջանկյալ արտահայտություններն ավելի լայն ընդգրկումով քննության է առել Մ. Աբեղյանը: Պետք է ասել, որ մինչև Աբեղյանը միջանկյալ արտահայտությունները (մասնավորապես միջանկյալ նախադասությունները) սահմանելիս քերականները հիմք են ընդունել դրանց իմաստային կողմը՝ անուղղակի ձևով նշելով միջանկյալ արտահայտությունների շարահյուսական ինքնուրույնությունը: Աբեղյանն առաջինն է, որ միջանկյալ արտահայտությունները սահմանելիս հենվում է դրանց՝ հիմնական նախադասության հետ քերականորեն չկապվելու հանգամանքի վրա. «Միջանկյալ ասվում են այն խոսքերը, որոնք մտնում են տուրիշ խոսքերի մեջ՝ առանց քերականորեն կապակցվելու նրանց հետ»¹⁸: Պետք է ասել, որ միջանկյալ արտահայտություններն այստեղ միակողմանիորեն են բնութագրված. իրավացիորեն հիմք ընդունելով միջանկյալ արտահայտությունների՝ հիմնական նախադասության հետ քերականորեն չկապվելու հանգամանքը, Աբեղյանը սահմանումից դուրս է թողել դրանց իմաստային բնութագիրը: Սակայն հենց իմաստային դրսևորումներն են, որ միջանկյալ արտահայտությունները առանձնացնում են նախադասության հետ քերականորեն չկապվող այլ արտահայտություններից: Սակայն «միջարկության խոսքերի» վերաբերյալ արդեն Աբեղյանը գրում է. «Այս կարգին են պատկանում հաճախ և եղանակական մակբայները, որոնք իբրև միջանկյալ բառեր մտնելով խոսքի մեջ՝ եղանակավորում են խոսքի բովանդակությունը՝ ցույց տալով հավաստիություն, հավանականություն, երկրայություն ևլն»¹⁹: Իսկ «միջարկության խոսքեր» Աբեղյանը անվանում է այն միջանկյալ արտահայտությունները, որոնք կազմվում են կամ ձայնարկություններից, կամ ձայնարկության նշանակությամբ գործածվող բառերից²⁰: Միջանկյալ արտահայտությունների մեջ լեզվաբանը մտնում է. «Գլխավոր խոսքերը... երբ շրջումով մտնում են ուղղակի կամ անուղղակի խոսքերի մեջ... Գլխավոր խոսքը, երբ մտնում է երկրորդականի մեջ... Այնպիսի խոսքեր, որ առանձին և ուրույն իմաստ ունեն և շատ երկրորդաբար միայն պարզում են ասացվածի միտքը»²¹: Ասենք, որ Աբեղյանի ներդրումը միջանկյալ արտահայտությունների շարահյուսական վերջնական արժեքավորման հարցում ևս մեծ է և որոշիչ:

¹⁶ Ա. Արաբաջյան, Տարական քերականություն հայոց աշխարհաբար լեզվի, մասն. Առաջին, Ալեքսանդրապոլ, 1903, էջ 50:

¹⁷ Ստ. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, մասն Ա, Բ, Գ, Տրգ. զիս, 1906, էջ 28:

¹⁸ Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 277:

¹⁹ Նույն տեղում, էջ 278:

²⁰ Նույն տեղում, էջ 277—278:

²¹ Նույն տեղում, էջ 277:

Ժամանակակից քերականները նույնպես միջանկյալ արտահայտությունները բնորոշելիս հիմք են ընդունում այն հանգամանքը, որ դրանք քերականորեն չեն կապվում հիմնական նախադասության հետ: Քերականագիտության զարգացման ժամանակակից մակարդակը թույլ է տալիս բազմակողմանի և ավելի խոր քննության ենթարկել հիմնական նախադասության հետ քերականորեն չկապվող արտահայտությունները, որոնց թվում և, արդեն տարբերակված ձևով՝ միջանկյալ և ներդրյալ բառերը, բառակապակցություններն ու նախադասությունները քերականական տարբեր մակարդակներում:

Ինչպես ասվեց վերը, միջանկյալ և ներդրյալ արտահայտությունները ի սկզբանե չեն գիտակցվել որպես շարահյուսական առանձին կարգեր, այլ ընկալվել են որպես նախադասության հետ շառնչվող (կամ քիչ առնչվող) համամասն արտահայտություններ, որոնք խոսք են ներմուծվել այլևայլ նպատակներով: Միջանկյալ և ներդրյալ արտահայտությունների, որպես շարահյուսական առանձին կարգերի, տարբերակված ընկալումը կապվում է ինչպես դրանց աճող գործածության, այնպես էլ լեզվի զարգացման հետ ընդհանրապես: Ժամանակակից հայ քերականագիտության մեջ միջանկյալ և ներդրյալ արտահայտություններն արդեն առանձնացել են որպես քերականական ինքնուրույն կարգեր և ընդհանուր գծերով ունեն իրենց շարահյուսական բնութագիրը²²:

Հայ քերականագիտության մեջ միջանկյալ և ներդրյալ արտահայտությունները տարբերակված ձևով ներկայացրել է Վ. Առաքելյանը²³: Քննելով միջանկյալ բառերի ու բառակապակցությունների իմաստային առումները՝ Վ. Առաքելյանը տվել է հետևյալ սահմանումը. «Միջանկյալ կոչվում են այնպիսի նախադասություններ, որոնք շարահյուսորեն չեն կապվում տվյալ խոսքի հիմնական նախադասության հետ, այլ առանձնանալով նրանից՝ կատարում են ճիշտ միևնույն պաշտոնները, ինչ որ միջանկյալ բառերն ու քառակապակցությունները: Ինչպես տեսանք, այս վերջինները դրսևորում են խոսքի հավաստի կամ երկբայական լինելը, նախադասության ձևի ու իմաստի գնահատականը, նախադասությունների փոխհարաբերությունները, գիմում, ջանազան հուզարտահայտչական երանգներ և այլն»²⁴: «Հայերենի շարահյուսություն» աշխատության մեջ ներդրյալ են համարվում «այն նախադասությունները, որոնք խոսքի հիմնական շղթայից անջատվում են հնչերանգային կապերով, բայց խոսքի մեջ մտնող որևէ նախադասության համար պարունակում են կողմնակի հաղորդում կամ որևէ առնչվյալմբ բացահայտում են նրան վերաբերող այլևայլ հանգամանքներ»²⁵:

Որոշ քերականների մոտ տարակարծությունների տեղիք է տվել միջանկյալ և ներդրյալ արտահայտությունների՝ հիմնական նախադասության անդամ լինել-չլինելու հարցը: Ոմանք գտնում են, որ մասնավորապես ներդրյալ արտահայտությունները կարող են հանդես գալ նախադասության տարբեր անդամների պաշտոններով՝ բացահայտիչ, պարագաներ և այլն: Սակայն այս մոտեցումը իրավացիորեն հերքվում է քերականների մեծամասնության կողմ:

²² Պետք է ասել, որ հայ քերականագիտության մեջ միջանկյալ և ներդրյալ արտահայտությունների տարբերակված ընկալման հարցում մեծ դեր ունեն ունի լեզվաբանները, որոնց ջանքերով այդ հարցի կապակցությամբ ստեղծված է հարուստ գրականություն: Ռուսաց լեզվի ակադեմիական քերականության մեջ արդեն ուսումնասիրված են ինչպես ներդրյալ նախադասությունները, այնպես էլ բառերն ու բառակապակցությունները՝ իրենց իմաստային դանազան դրսևորումներով: Ռուսերենի հետևողությամբ հայ քերականագիտության մեջ ևս առանձնացվեցին ու տարբերակվեցին միջանկյալ և ներդրյալ արտահայտությունները («Грамматика русского языка», т. 2, ч. 2, М., 1960, с. 165):

²³ Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. 2, Երևան, 1964, էջ 144—147:

²⁴ Նույն տեղում, էջ 144—145:

²⁵ Նույն տեղում, էջ 448:

մից, քանի որ միջանկյալ և ներդրյալ արտահայտություններն ընդհանրապես քննության են առնվում որպես նախադասության հետ քերականորեն չկապվող արտահայտություններ: Դրանց և հիմնական նախադասության միջև շարահյուսական որևէ կապ գտնելն անհնարին է, որովհետև չկա: Հենց շարահյուսական կապի բացակայությունն է այն հիմքը, որը մեզ հնարավորություն է տալիս խոսելու միջանկյալ և ներդրյալ նախադասությունների առավել կամ պակաս հարաբերական ինքնուրույնության մասին: Միջանկյալ արտահայտությունները չեն կարող հիմնական նախադասության անդամ դառնալ, քանի որ նրանք միայն եղանակավորող-բրանգավորող դեր ունեն, իսկ ներդրյալ արտահայտությունները պարունակում են կողմնակի հաղորդումներ հիմնական նախադասության կամ դրա որևէ անդամի վերաբերյալ, հետևաբար, ներդրյալ արտահայտությունները նույնպես նախադասության անդամ չեն կարող դառնալ:

Հենց միջանկյալ և ներդրյալ արտահայտությունների ընդհանրություններից մեկն այն է, որ երկուսն էլ քերականորեն չեն կապվում հիմնական նախադասության հետ, և սա էլ պայմանավորում է դրանց՝ նախադասության հետ քերականորեն չկապվող բառերի, բառակապակցությունների ու նախադասությունների քերականական ավելի ընդհանուր կարգի մեջ ամփոփելու հանգամանքը: Միջանկյալ և ներդրյալ արտահայտությունները պետք է դիտել որպես քերականական նույն երևույթի տարրեր դրսևորումներ, որոնց գործածությունը խոսքային շղթայի մեջ հետապնդում է նույն նպատակը՝ ավելի ամբողջական, պատկերավոր ու շոշափելիորեն ըմբռնելի դարձնել հեղինակային խոսքը: Եվ եթե այդ նպատակին հասնելու միջոցները տվյալ դեպքում երկուսն են, հետևաբար տարրեր են, մեկը՝ վերաբերմունքային իմաստային երանգներով, մյուսը՝ լրացուցիչ տեղեկություններով, դիտողություններով և այլն:

1975 թ. հրատարակված շարահյուսության բուհական դասագրքում միջանկյալ է համարվում «այն նախադասությունը, որ քերականորեն ուղղակի կերպով չի կապվում այն նախադասության հետ, որի կազմում կամ որի հետ գործածվում է»²⁶: Անուղղակի կապի տակ հասկացվում է միջանկյալ նախադասության՝ իմաստային տեսակետից գլխավոր նախադասությանը վերաբերելը²⁷: Ներդրյալ է համարվում «այն նախադասությունը, որն արտահայտում է լրացուցիչ տեղեկություն, մեկնաբանություն, ճշտում, դիտողություն»²⁸: Ներդրյալ նախադասությունը դիտվում է որպես միջանկյալ նախադասության մի տեսակ²⁹: Կարծում ենք, որ ներդրյալը չպետք է միջանկյալ նախադասության մի առանձին տեսակ համարել, քանի որ դրանք երկուսն էլ նախադասության հետ քերականորեն չկապվող արտահայտությունների տարրեր տեսակներ են, որոնք խոսք են ներմուծվում այլևայլ նպատակներով: Հակառակ դեպքում, նույն հաջողությամբ միջանկյալը կարող ենք համարել ներդրյալ նախադասության մի տեսակ:

Ուսումնասիրելով միջանկյալ և ներդրյալ արտահայտությունների իմաստային բազմազան դրսևորումները ժամանակակից հայերենում՝ մենք տվել ենք դրանց հետևյալ սահմանումները. «Միջանկյալ կոչվում են այն բառերը, բառակապակցությունները և նախադասությունները, որոնք քերականորեն ու հնչերանգով չեն կապվում հիմնական նախադասության հետ, բայց արտահայտում են խոսողի վերաբերմունքը շարադրվող մտքի, նյութի վերաբերյալ, ցույց են տալիս մատուցվող մտքի ծագումը, նրա կապն ու հարա-

26 Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնապյան, Հ. Ա. Օհանյան, Խ. Գ. Բադեկյան, Հայոց լեզու, մաս 2, Երևան, 1975, էջ 438:

27 Նույն տեղում, էջ 438:

28 Նույն տեղում, էջ 441:

29 Նույն տեղում, էջ 441:

բերությունը արդեն արտահայտված կամ արտահայտվելիք մտքի հետք³⁰, «Ներդրյալ կոչվում են այն բառերը, բառակապակցությունները և նախադասությունները, որոնք խոսքի մեջ մտնող որևէ նախադասության, նրա որևէ անդամի կամ խոսքային ամբողջ շղթայի վերաբերյալ պարունակում են չրացուցիչ, բայց անհրաժեշտ տեղեկություններ, բացատրություններ, հիմնավորում, պարզաբանում են բուն նախադասության բովանդակության հետ կապված այլևայլ հանգամանքներ, շարահյուսորեն չեն կապվում հիմնական նախադասության հետ և հնչերանգով առանձնանում են խոսքային տվյալ շղթայից»³¹։ Ի տարբերություն միջանկյալ շատ կառույցների, ներդրյալ արտահայտությունները կայուն չեն, հետևաբար, ավելի բազմազան են ու առատանասակ։ Ներդրյալ արտահայտությունները, որպես այդպիսիք, չունեն վերաբերմունքային երանգներ, քանի որ դրանք ոչ թե զգացական այս կամ այն դրսևորման արտահայտություններ են, այլ ունեն հիմնականում նկարագրական բնույթ։ Սակայն պետք է ասել, որ խոսակցական որոշակի միջավայրում դրանք կարող են ստանալ վերաբերմունքային որոշ երանգներ՝ կախված հնչյունակային խոսքի ոճական առանձնահատկություններից՝ մնալով դրանց սոսկ մեքենայական կրողներ, քանի որ խոսքային տվյալ միջավայրից դուրս, այդ երանգները վերանում են։

Քանի որ ներդրյալ արտահայտությունների կապը հիմնական նախադասության հետ միայն իմաստային է, հետևաբար, այս տեսակետից դրանք ընդհանրություն են հանդես բերում միջանկյալ արտահայտությունների հետ, որոնց գոյությունը լեզվում նույնպես պայմանավորված է հիմնական նախադասության հետ ունեցած իմաստային կապով։ Սակայն միջանկյալ արտահայտությունները (մասնավորապես նախադասությունները) հիմնական նախադասության հետ գտնվում են իմաստային փոխազդեցության մեջ՝ սրանով հենց տարբերվելով ներդրյալ արտահայտություններից, որոնց իմաստային կապը բուն նախադասության հետ միակողմանի է, այսինքն, միայն ներդրյալ արտահայտությունն է ազդվում հիմնական նախադասությունից։

Պարզ է, որ եթե միջանկյալ և ներդրյալ արտահայտությունները շարահյուսորեն չեն կապվում հիմնական նախադասության հետ, ապա պետք է արտասանվեն առանձնահատուկ հնչերանգով։ Մասնավորապես միջանկյալ և ներդրյալ նախադասություններն արտասանվում են ավելի ցածր հնչերանգով և համեմատաբար ավելի արագ տեմպով։ Խոսքի հետ քերականորեն չկապվող նախադասությունների հնչերանգային առանձնահատկությունները, բնականաբար, իրենց արտացոլումը պետք է ունենան գրավոր խոսքում։ Մեր անցյալի քերականները միջանկյալ և ներդրյալ արտահայտությունները (իհարկե, առանց տարբերակման) հիմնական նախադասությունից անջատել են կամ ստորակետերով, կամ ստորակետ-գծերով, կամ փակագծերով։ Արսեն Բազրատունին գրում է. «Փակագիծ կ'ըսուի աս նշանս ալ ||, երկան միջանկեալ բան մը մէջն առնելու զատելու համար։ Բայց կարճերը ստորակետով զատել հերիք է»³²։ Աբեղյանը «միջանկյալ խոսքերի» հիմնական կետադրությունը համարելով ստորակետերը՝ գրում է. «Փակագիծ դրվում է այնպիսի միջանկյալ խոսքերի կամ բառերի սկզբից և վերջից, որոնք առանձին և ուրույն իմաստ ունեն և ասացվածին չեն վերաբերում, կամ շատ երկրորդաբար միայն պարզում են նրա իմաստը»³³։

Ժամանակակից հայոց լեզվի քերականության մեջ, միջանկյալ և ներ-

³⁰ Ա. Մարության, Միջանկյալ կառույցները Նար-Գոսի ստեղծագործություններում («Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1981, № 4, էջ 52)։

³¹ Ա. Մարության, Ներդրյալ արտահայտությունները ժամանակակից հայերենում (ՀՄՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1983, № 2, էջ 28)։

³² Արսեն Կոմիտաս Բազրատունի, Տարբեր հայերէն քերականութեան, Վեներիկ, 1874, էջ 209—210։

³³ Մ. Արեղյան, Նշվ. աշխ., էջ 363։

դրրյալ արտահայտությունների տարբերակված ընկալմանը զուգընթաց, անհրաժեշտ է որոշակի տեսք տալ նաև դրանց կետադրությունը: Այս հարցում դեռևս չկա միասնական մոտեցում: Ոմանք և՛ միջանկյալ, և՛ ներդրյալ արտահայտությունները (մասնավորապես նախադասությունները)³⁴ հիմնական նախադասությունից անջատում են փակագծերով, միջակետերով, ստորակետ-գծերով: Սա որոշ շփոթությունների տեղիք կարող է տալ: Միջանկյալ արտահայտությունները հիմնական նախադասությունից հարմար է անջատել միայն ստորակետերով: Այլ բան է, երբ համեմատաբար ծավալուն և հիմնական նախադասության մտքի հետ իմաստային ավելի թույլ կապ ունեցող միջարկությունները խոսքային հիմնական շղթայից անջատվում են վերջակետերով, ներդրյալ նախադասությունները նպատակահարմար է բուն նախադասությունից անջատել փակագծերով, գրավոր խոսքում ևս կտարբերակվեն միջանկյալ և ներդրյալ արտահայտությունները:

Ամփոփենք. շտաբերակված ձևով միջանկյալ և ներդրյալ արտահայտությունների, որպես հիմնական նախադասությանն ուղեկցող օժանդակ արտահայտությունների, գոյությունը խոսքում նկատվել է հայ քերականագիտության մտքի դարգացման դեռևս վաղ շրջաններում: Հետագայում դրանք ստացել են նաև շարահյուսական արժեքավորում: Ժամանակակից քերականագիտության մեջ միջանկյալ և ներդրյալ արտահայտություններն արդեն տարբերակված ձևով թեև ընդունվել են որպես շարահյուսական առանձին կարգեր և ունեն իրենց քերականական ընդհանուր բնութագիրը, բայց դեռևս ամբողջական և հանգամանալից ուսումնասիրության կարիք են դգում:

ВОСПРИЯТИЕ ВВОДНЫХ И ВСТАВНЫХ ВЫРАЖЕНИЙ В АРМЯНСКОЙ ГРАММАТИКЕ

АВЕТИК МАРУТЯН

Резюме

Не только отдельные слова, но и целые предложения, как средства полноценного выражения речи, в качестве вводных, употреблялись еще в древнеармянском языке—грабаре, но вплоть до XIX в. они не получили синтаксической оценки. Восприятие и синтаксическое осмысление вводных и вставных слов, словосочетаний и предложений как особых выражений, грамматически не связанных с речью, обуславливается развитием новоармянского языка—ашхарабара. Несмотря на то, что в современной армянской грамматике вводные и вставные выражения были восприняты как синтаксические категории, имеющие свои общие грамматические характеристики, они нуждаются в целостном и подробном исследовании.

³⁴ Հատկապես միջանկյալ և ներդրյալ նախադասությունների կետադրությունն ունի ճշգրիտ ման կարիք, քանի որ բառերի ու բառակապակցությունների կետադրությունը հիմնականում որոշակի է: